## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Այգեպատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (տղաների խումբ) (4 դասաժամ), աշխարհագրություն (10 դասաժամ) առարկաներից ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆմշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք էներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չա-
փի,
- բարձրագույն կրթությունը հավաստող
փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի
26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխ
ան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ
տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանք
ային գրքույկի պատճենը (առկայության
դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝
ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող
փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նա-
եւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ
կամ գիտական կոչումը հավաստող փաստ
աթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու
դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի31-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի15-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի
Այգեպատի միջնակարգ դպրոցում, հասցեն՝Արարատի մարզ, գ. Այգեպատ, Մաշտոցի փ.3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 49-60-22 հեռախոսահամարով: